ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ N 1
N ԲՄԱՊՁԲ-4/9-8 ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ

ք. Երևան 26 .12.2018թ.

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ Մ. Ղամբարյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա՝ այսուհետև Գնորդ, մի կողմից և ««ՏԻԳՎԱՆ» ՍՊԸ-ն, ի դեմս ընկերության տնօրեն Հ. Մկրտչյանի, այսուհետև՝ Վաճառող, մյուս կողմից, երկուսը միասին՝ Կողմեր՝ հիմք ընդունելով 18.09.2018թ. կնքված N ԲՄԱՊՁԲ-4/9-8 գնման Պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 8.5 կետը և ՀՀ կառավարության 04.05.2017թ. N526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» 56-րդ կետի 6-րդ ենթակետի պահանջները՝ փոխադարձ համաձայնությամբ որոշեցին կնքել սույն փոփոխությունը (այսուհետև՝ Փոփոխություն) հետևյալի մասին.

1. Փոփոխության առարկան

1.1 Քանի որ սույն պայմանագրի կատարումը Առջևի կարդանայի լիսեռների մասով հնարավոր չի լինելու կատարել 2018թ. ընթացքում, ուստի Կողմերը փոխադարձ համաձայնությամբ որոշեցին Պայմանագրին կից վճարման ժամանակացույցում կատարել փոփոխություն՝ նախատեսելով 720 000 (յոթ հարյուր քսան հազար) ՀՀ դրամի չափով կանխավճար՝ հաջորդ բյուջետային տարվա ընթացքում պայմանագրի կատարման դեպքում ֆինանսավորման խնդիր չունենալու նպատակով:

1.2 Կանխավճարի տրամադրումը լիազորված մարմնի կողմից սույն փոփոխությունը հաշվառվելուց հետո՝ 1 (մեկ) բանկային օրվա ընթացքում բանկային երաշխիքի ապահովվածության դեպքում, բայց ոչ ուշ քան 27.12.2018թ. ներառյալ: Մատակարարման արդյունքում հաշվարկման ենթակա տույժերը Վաճառողը պարտավոր է վճարել ՀՀ պետական բյուջեի համապատասխան հաշվեհամարին:

2. Այլ պայմաններ

2.1 Սույն Փոփոխությունն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև փոխադարձ պարտավորությունների լրիվ կատարումը:

2.2 Սույն Փոփոխության մեջ չնշված՝ Կողմերի՝ Պայմանագրով նախատեսված իրավունքները և պարտականությունները, Ապրանքի հանձման-ընդունման, Կողմերի պատասխանատվության հետ կապված և այլ հարաբերություններ թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն Փոփոխությունը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը, կազմված է 2 էջից, հայերենով, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն փոփոխությանը կից N 1 հավելվածը հանդիսանում է փոփոխության անբաժանելի մասը:

3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունը:

ԳՆՈՐԴ	**ՎԱՃԱՌՈՂ**
ՀՀ պաշտպանության նախարարություն	«ՏԻԳՎԱՆ» ՍՊԸ
ք. Երևան Բագրևանդի 5	ՀՀ Արարատի մարզ, գ. Գեղանիստ, 26, 14տ
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն	«Ամերիաբանկ» ՓԲԸ
Հ/Հ 900011144079	Հ/Հ 1570028193630100
ՀՎՀՀ 02522157	ՀՎՀՀ 04427695
ՀՀ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ	ՏՆՕՐԵՆ
Մ. ՂԱՄԲԱՐՅԱՆ	Հ. ՄԿՐՏՉՅԱՆ

"ТИГВАН" "TIGVAN" 04427695

Հավելված N 1 ԲՄԱՊՁԲ-4/9-8
ծածկագրով գնման պայմանագրի թիվ 1 Փոփոխության

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*
մինչև փոփոխությունը

ՀՀ	Գնման ենթակա ապրանքների անվանումը	Նախատեսվում է ֆինանսավորել 2018թ.-ին ըստ ամիսների, բայց ոչ ուշ քան 10.12.2018թ.		
		հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր
1	Առջևի կարդանայի լիսեռ	720 000	720 000	720 000

Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով:

թիվ 1 փոփոխությամբ

ՀՀ	Գնման ենթակա ապրանքների անվանումը	Նախատեսվում է ֆինանսավորել 2018թ.-ին ըստ ամիսների, բայց ոչ ուշ քան 27.12.2018թ.
		դեկտեմբեր
1	Առջևի կարդանայի լիսեռ	720 000

Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ

Մ. ՂԱՄԲԱՐՅԱՆ

ԿԱՏԱՐՈՂ
"ՏԻԳՎԱՆ" ՍՊԸ-ի
Տնօրեն

Հ. ՄԿՐՏՉՅԱՆ

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
կնքված պայմանագրում կատարված փոփոխությունների մասին

Պատվիրատուն՝ ՀՀ պաշտպանության նախարարությունը, որը գտնվում է ք. Երևան, Բագրևանդի 5 հասցեում ստորև ներկայացնում է իր կարիքների համար «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-4/9» ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 2018 թվականի սեպտեմբերի 18-ին կնքված N ԲՄԱՊՁԲ-4/9-8 ծածկագրով գնման պայմանագրում 2018 թվականի դեկտեմբերի 26-ին կատարված փոփոխության վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի պատճենը:

Քանի որ սույն պայմանագրի կատարումը Առջևի կարդանայի լիսեռների մասով հնարավոր չի լինելու կատարել 2018թ. ընթացքում, ուստի Կողմերը փոխադարձ համաձայնությամբ որոշեցին Պայմանագրին կից վճարման ժամանակացույցում կատարել փոփոխություն՝ նախատեսելով 720 000 (յոթ հարյուր քսան հազար) ՀՀ դրամի չափով կանխավճար՝ հաջորդ բյուջետային տարվա ընթացքում պայմանագրի կատարման դեպքում ֆինանսավորման խնդիր չունենալու նպատակով:

Փոփոխության նկարագրություն՝ Կողմերը փոխադարձ համաձայնությամբ որոշեցին Պայմանագրին կից վճարման ժամանակացույցում կատարել փոփոխություն՝ ըստ սույն հայտարարությանը կից №1 Հավելվածի:

Փոփոխության հիմնավորում՝ Սույն փոփոխությունը կատարվում է՝ հիմք ընդունելով Պայմանագրի 8.5 կետը և ՀՀ կառավարության 04.05.2017թ. N526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» 56-րդ կետի 6-րդ ենթակետի պահանջները: Սույն փոփոխությունը չի դասվում ՀՀ կառավարության 04.05.2017թ. № 526-Ն որոշմամբ սահմանված արհեստական փոփոխությունների շարքին: Պայմանագրում նման փոփոխություն կատարվում է առաջին անգամ: Պայմանագրով կողմերի փոխադարձ պարտավորությունները դեռ չեն ավարտվել: Ապրանքները ներառված են ՀՀ կառ. 28.12.17թ. N 1717-Ն որոշման մեջ:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել գնումների համակարգող՝ ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտի ԳՓՁ վարչության բաժնի առաջատար մասնագետ Վ. Սահակյանին:

Հեռախոս՝ 010-29-43-53:

Էլ. փոստ՝ *v.sahakan@mil.am*:

Պատվիրատու՝ ՀՀ պաշտպանության նախարարություն

Հավելված N 1 ԲՄԱՊՁԲ-4/9-8
ծածկագրով գնման պայմանագրի թիվ 1 Փոփոխության

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*
մինչև փոփոխությունը

Հ/Հ	Գնման ենթակա ապրանքների անվանումը	Նախատեսվում է ֆինանսավորել 2018թ.-ին ըստ ամիսների, բայց ոչ ուշ քան 10.12.2018թ.		
		հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր
1	Առջևի կարդանայի լիսեռ	720 000	720 000	720 000

Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով:

թիվ 1 փոփոխությամբ

Հ/Հ	Գնման ենթակա ապրանքների անվանումը	Նախատեսվում է ֆինանսավորել 2018թ.-ին ըստ ամիսների, բայց ոչ ուշ քան 27.12.2018թ.
		դեկտեմբեր
1	Առջևի կարդանայի լիսեռ	720 000

Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով: